Արձանագրություն N 2

Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18.11.2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Ղազարյան /գնահատող/,

Լ. Քոթանջյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Բացակայում էին՝ Լ. Բաղդասարյան /գնահատող/, Ի. Խաչատուրովա /բացող/

1.Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով դադարեցնելու մասին

(Վ. Ասատրյան)

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների փաստաթղթերն արձանագրեց.

Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած ֆ/ա Արմեն Արշալույսի Ասատրյանը, ֆ/ա Վասպուր Սաշիկի Ասատրյանը, ֆ/ա Հայկ Սահարունու Խաչատրյանը, ֆ/ա Հայկ Բագրատի Միրզոյանը, ֆ/ա Բագրատ Միրզոյանը համապատասխան լիազորագրերով լիազորել են ֆ/ա Բագրատ Միրզոյանին էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է իրենց փաստաթղթերը, Բագրատ Միրզոյանը նույնպես ընթացակարգի մասնակից է: Ընթացակարգին հայտ ներկայացրած ա/ձ Արմեն Պետրոսյանը, ա/ձ Շուշանիկ Քաղքցյանը, ա/ձ Աննա Ղուկասյանը համապատասխան լիազորագրերով լիազորել են Աննա Ղուկասյանին էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է իրենց փաստաթղթերը, Աննա Ղուկասյանը նույնպես ընթացակարգի մասնակից է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված մասնակիցների հայտերը՝ ներկայացված լիազորագրերի համաձայն հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ նույն անձանց կողմից, որոնք իրենց հերթին մասնակցել են նաև գնման ընթացակարգին, որպես մասնակից, գնահատող հանձնաժողովը նման մասնակցությունը դիտարկելով որպես հնարավոր շահերի բախում և հակամրցակցության համաձայնություն՝ որոշեց գրություններ ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 3,9,10,12,13,14,15,16,17,18,20,22,26,,27,28,30,34,35,36,38,40,42,49,51,52,53,54,55,56,57,58,60, 61,62,64,65,67 չափաբաժինների մասով կասեցնել, մինչև վերը նշված մարմիններից ստացված պատասխանների հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Ասատրյան

Անդամներ՝ ---------- Ն. Ղազարյան

---------- Լ. Քոթանջյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան